ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 մայիսի 2021 թվականի N 266-Ա

ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2.2 կետով, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման նախարություն համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն հրամանի հավելված 1-ի 8.4 կետը

ՈՐՈՇՈՒՄ. ԵՄ '

1. Հաստատել Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության, քաղաքաշինության, գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի պետի տեղակալի (ծածկագիր՝2.2-1) համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի հետևյալ կազմը՝
1) Նունիկ Ասրյան- Լոռու մարզպետարանի ներկայացուցիչ,
2) Նաիրա Բարիկյան - Լոռու մարզպետարանի ներկայացուցիչ,
3) Աշոտ Ավետիսյան- Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ,
4)Ռուբիկ Ղազարյան Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ
5) Նորիկ Վելիցյան – ավագանու անդամ,
6) Նարինե Բաղդասարյան – ուսումնական հաստատության ներկայացուցիչ:
2. Հանձնաժողովի աշխատանքների տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար լիազորված անձ նշանակել Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի համակարգչային օպերատոր Սյուզաննա Սերյոժայի Սոլոյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 10
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 մայիսի 2021 թվականի N 267-Ա

ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2.2 կետով, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման նախարություն համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն հրամանի հավելված 1-ի 8.4 կետը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1.Հաստատել Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական, հաշվապահական հաշվառման, եկամուտների հավաքագրման և գանձման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-1) համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի հետևյալ կազմը՝
1)Նունիկ Ասրյան- Լոռու մարզպետարանի ներկայացուցիչ,
2) Նաիրա Բարիկյան – Լոռու մարզպետարանի ներկայացուցիչ,
3)Աշոտ Ավետիսյան - Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ,
4)Համեստ Շահբազյան–Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ,
5)Հայկանուշ Ռևազյան -ավագանու անդամ,
6)Արմեն Խանաղյան-ուսումնական հաստատության ներկայացուցիչ:
2.Հանձնաժողովի աշխատանքների տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար լիազորված անձ նշանակել Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի համակարգչային օպերատոր Սյուզաննա Սերյոժայի Սոլոյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 10
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2021 թվականի N 268-Ա

ԲՆԱԿԱՐԱՆԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 -Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետը, 50-րդ կետը և 62-րդ կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Հայկ Բորիսի Ջանոյանին սեփականության իրավունքով պատկանող բնակարանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական՝ 19042021-06-0024, տրված՝ 19.04.2021թ.) Լոռու մարզ, ք.Տաշիր, Դպրոցականների փողոց, շենք 27, 18 բնակարան հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք.Տաշիր, 9-րդ թաղամաս, Դպրոցականների փողոց, բ/շ 27, բնակարան 18 փոստային հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 11
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2021 թվականի N 269-Ա

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-21/40» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021թ. ապրիլի 26-ի N 4 արձանագրության արդյունքները, հիմք ընդունելով, որ «Հեր-ՄուշՇին» ՍՊԸ -ը սահմանված ժամկետում ներկայացրել է ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Հեր-ՄուշՇին» ՍՊԸ-ի հետ կնքել ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար Սարատովկա բնակավայրի կենցաղի տան շենքի վերակառուցում և վերանորոգում նախադպրոցական այլ ընտրանքային ծառայության կենտրոնի աշխատանքների ԿԱՏԱՐՄԱՆ «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-21/40» ծածկագրով պետական գնման պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 11
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2021 թվականի N 270-Ա

ԹԻՄՈՒՐ ՂԱՐԻԲԻ ՉՈԼՈՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումով և հիմք ընդունելով քաղաքացի Թիմուր Ղարիբի Չոլոյանի դիմումը (մուտք՝ 11.05.2021-ի ՄՀ-64-21)

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թիմուր Ղարիբի Չոլոյանին տալ գոյություն ունեցող տան բնակելի կցակառույցի կառուցման նախագծման թույլտվություն:
2. Թիմուր Ղարիբի Չոլոյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. մայիսի 11
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2021 թվականի N 271-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 -Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետը, 50-րդ կետը և 62-րդ կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Ալիսա Վանոյի Ավետիսյանին և Ռուբեն Միսակի Սարկիսյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական՝ 1307301, տրված՝ 23.02.2006-ին) Լոռու մարզ, ք. Տաշիր, Վան փողոց, թաղ. թիվ 5, տուն թիվ 33 բնակելի տուն հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, թաղամաս 1, Վան բ/զ, փողոց թիվ 5, տուն թիվ 33 փոստային հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 11
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2021 թվականի N 272-Ա

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-21/43» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021թ. ապրիլի 26-ի N 2 արձանագրության արդյունքները, հիմք ընդունելով, որ «ԱՁ Վեներա Դավթյան»-ը սահմանված ժամկետում ներկայացրել է ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.«ԱՁ Վեներա Դավթյան»-ի հետ կնքել ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար համակարգչի և սարքավորումների մատակարարման «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-21/43» ծածկագրով պետական գնման պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 11
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2021 թվականի N 273-Ա

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-21/41» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021թ. ապրիլի 26-ի N 3 արձանագրության արդյունքները, հիմք ընդունելով, որ «ԱՁ Սիրանուշ Հովհաննիսյան»-ը սահմանված ժամկետում ներկայացրել է ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ԱՁ Սիրանուշ Հովհաննիսյան»-ի հետ կնքել ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար ծառերի ու ծաղիկների մատակարարման «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-21/41-2» ծածկագրով պետական գնման պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 11
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մայիսի 2021 թվականի N 274-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՆԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ» -ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Նարա Բաղդասարյան»-ի 2021 թվականի մայիսի 11-ի N46 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Լեռնահովիտ, 9-րդ փողոց, թիվ 19 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Նարա Բաղդասարյան»-ի հայտը բավարարել և նրան տալ 2021 թվականի երկրորդ եռամսյակի համար ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 12
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մայիսի 2021 թվականի N 275-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՂԱՔ ՏԱՇԻՐ, 4-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ, ԽԱՆՋՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 4/1 ՀԱՍՑԵՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆՈՐ ՕԲՅԵԿՏԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 2) ենթակետով, 33-րդ և 50-րդ ենթակետերով և հիմք ընդունելով 15.08.2012-ին տրված անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման N 15082012-06-0200 վկայականը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.ՀՀ Լոռու մարզ Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 4-րդ թաղամաս, Խանջյան փողոց, թիվ 4/1 հասցեով անշարժ գույքի առանձնացվող օբյեկտին տրամադրել փոստային հասցե՝ համաձայն «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի բաժանման սխեմայի՝

1)0,15392 հա մակերեսով գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, 4-րդ թաղամաս, Խանջյան փողոց, թիվ 4/1 հասցեն:

2) 0.15498 հա մակերեսով գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, 4-րդ թաղամաս, Խանջյան փողոց, թիվ 4/2 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 12
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մայիսի 2021 թվականի N 276-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 -Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետը, 50-րդ կետը և 62-րդ կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Պողոս Ռոբերտի Աթոյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը (հիմք՝ 2020 թվականի օգոստոսի 14-ի Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի ԼԴ3/0410/02/20 վճիռը) Լոռու մարզ, Մեդովկա համայնք բնակելի տուն գյուղ Կրուգլայա-Շիշկա փ-2 տուն-20 հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Կրուգլայա-Շիշկա, 2-րդ փողոց, թիվ 20 փոստային հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 12
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մայիսի 2021 թվականի N 277-Ա

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-21/41» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021թ. ապրիլի 22-ի N 2 արձանագրության արդյունքները, հիմք ընդունելով, որ «ԱՐՏԵՄԻՍ» ՍՊԸ-ը սահմանված ժամկետում ներկայացրել է ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ԱՐՏԵՄԻՍ» ՍՊԸ-ի հետ կնքել ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար ծառերի ու ծաղիկների մատակարարման «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-21/41-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 14
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մայիսի 2021 թվականի N 278-Ա

ՎԱՀԵ ԿԱՐԵՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումով և հիմք ընդունելով քաղաքացի Վահե Կարենի Կարապետյանի դիմումը (մուտք՝ 14.05.2021-ի ՄՀ-66-21)

ՈՐՈՇՈՒՄ.ԵՄ՝

1. Վահե Կարենի Կարապետյանին տալ հասարակական սպասարկման շինության կառուցման նախագծման թույլտվություն:
2. Վահե Կարենի Կարապետյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. մայիսի 14
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մայիսի 2021 թվականի N 279-Ա

ԴԱՎԻԹ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան. Քաղաքացի Դավիթ Ասլանյանը, հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, իրավահարաբերության պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2021 թվականի ապրիլի 21-ին « Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.
2. Վարչական ակտը ընդունելու հիմք հանդիսացող փաստերը. Համաձայն Տաշիրի համայնքապետարանի ֆինանսական,հաշվապահական հաշվառման,եկամուտների գանձման և հավաքագրման բաժնի կողմից տրված և իրավահարաբերության պահին գործող « Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող ՀՀ Ոստիկանության ՃՈ կողմից տրամադրված փոխադրամիջոցների հաշվառման և գնահատման տվյալների՝ քննարկվող շարժական գույքը Տաշիր համայնքի քաղաք Տաշիր, թաղամաս 4, փողոց Սայաթ-Նովա,տուն 8 հասցեում հաշվառված ՎԱԶ-21051 մակնիշի, 41SL211 հերթական համարանիշի փոխադրամիջոցը հանդիսանում է քաղաքացի Դավիթ Ասլանյանին սեփականությունը,որը իրավահարաբերության պահին գործող « Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Նշված գույքի համար 2015-2020 ժամանակահատվածի համար վճարման ենթակա գույքահարկը կազմում է 52.217(հիսուներկու հազար երկու հարյուր տասնյոթ) ՀՀ դրամ,ինչը 2015-2020-ն ընկած ժամանակահատվածում չի վճարվել: Քաղաքացի Դավիթ Ասլանյանի կողմից նշված ժամանակահատվածի համար գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 13.857

(տասներեք հազար ութ հարյուր հիսունյոթ) ՀՀ դրամի չափով: 2021 թվականի ապրիլի 21-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2021 թվականի մայիսի 14-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Դավրթ Ասլանյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 04 .05.2021) : Դավիթ Ասլանյանը չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն իրավահարաբերության պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նշված օրենքի երրորդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայն իրավահարաբերության պահին գործող «Գույքահարկի մասին»ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ, գույքահարկի գումարը վճարվում է համայնքի վարչական տարածքում հաշվառված փոխադրամիջոցների համար հարկվող օբյեկտի հաշվառման վայրի համայնքի բյուջե: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.04 տոկոսի չափով: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի ՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ,ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ,«Վարչարարության հիմունքների և վարչականական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, ՀՀ հարկային օրենսգրքի 447-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1.Քաղաքացի Դավիթ Ասլանյանից հօգուտ Տաշիր համայնքի բյուջե գանձել 52.217(հիսուներկու հազար երկու հարյուր տասնյոթ) ՀՀ դրամ՝ որպես մինչև 2015-2020-ին Տաշիր համայնքի քաղաք Տաշիր, թաղամաս 4, փողոց Սայաթ-Նովա,տուն 8 հասցեում հաշվառված ՎԱԶ-21051 մակնիշի, 41SL211 հերթական համարանիշի փոխադրամիջոցի համար վճարման ենթակա գույքահարկի գումար,որից 38 . 360 (երեսունութ հազար երեք հարյուր վաթսուն) ՀՀ դրամ՝ որպես ապառք,13 . 857 (տասներեք հազար ութ հարյուր հիսունյոթ) ՀՀ դրամ՝ որպես պարտականությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում.
4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:
5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման մասին օրենքով սահմանված կարգով իրազեկման հաջորդ օրվանից:
6. Գույքահարկը պետք է վճարվի ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275081025 հաշվարկային հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. մայիսի 14
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մայիսի 2021 թվականի N 280-Ա

ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան. Քաղաքացի Գառնիկ Մկրտչյանը, հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, իրավահարաբերության պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2021 թվականի ապրիլի 21-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը. 2. Վարչական ակտը ընդունելու հիմք հանդիսացող փաստերը. Համաձայն Տաշիրի համայնքապետարանի ֆինանսական,հաշվապահական հաշվառման,եկամուտների գանձման և հավաքագրման բաժնի կողմից տրված և իրավահարաբերության պահին գործող « Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող ՀՀ Ոստիկանության ՃՈ կողմից տրամադրված փոխադրամիջոցների հաշվառման և գնահատման տվյալների՝ քննարկվող շարժական գույքը Տաշիր համայնքի քաղաք Տաշիր, Անի բ/զ,շենք 5,բնակարան 10 հասցեում հաշվառված ՇԵՎՐՈԼԵ-Epica մակնիշի, 17UL888 հերթական համարանիշի փոխադրամիջոցը հանդիսանում է քաղաքացի Գառնիկ Մկրտչյանի սեփականությունը,որը իրավահարաբերության պահին գործող « Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Նշված գույքի համար 2017-2020 թվականներն ընկած ժամանակահատվածի համար վճարման ենթակա գույքահարկը կազմում է 133.947(հարյուր երեսուներեք հազար ինը հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամ,ինչը 2017-2020 թվականներն ընկած ժամանակահատվածում չի վճարվել: Քաղաքացի Գառնիկ Մկրտչյանի կողմից նշված ժամանակահատվածի համար գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում

առաջացել է տույժ՝ 28.347 (քսանութ հազար երեք հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամի չափով:

2021 թվականի ապրիլի 21-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2021 թվականի մայիսի 14-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Գառնիկ Մկրտչյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 04 .05.2021) : Գառնիկ Մկրտչյանը չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն իրավահարաբերության պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նշված օրենքի երրորդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայն իրավահարաբերության պահին գործող «Գույքահարկի մասին»ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ, գույքահարկի գումարը վճարվում է համայնքի վարչական տարածքում հաշվառված փոխադրամիջոցների համար հարկվող օբյեկտի հաշվառման վայրի համայնքի բյուջե:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.04 տոկոսի չափով:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ,ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ,«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ, ՀՀ հարկային օրենսգրքի 447-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Քաղաքացի Գառնիկ Մկրտչյանից հօգուտ Տաշիր համայնքի բյուջե գանձել 133 .947(հարյուր երեսուներեք հազար ինը հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամ՝ որպես մինչև 2017-2020 թվականներին Տաշիր համայնքի քաղաք Տաշիր, Անի բ/գ,շենք 5,բնակարան 10 հասցեում հաշվառված ՇԵՎՐՈԼԵ-Epica մակնիշի, 17UL888 հերթական համարանիշի փոխադրամիջոցի համար վճարման ենթակա գույքահարկի գումար,որից 105 . 600(հարյուր հինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 28 . 347

(քսանութ հազար երեք հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամ՝ որպես պարտականությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման մասին օրենքով սահմանված կարգով իրազեկման հաջորդ օրվանից:

6. Գույքահարկը պետք է վճարվի ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275081025 հաշվարկային հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. մայիսի 14
ք.Տաշիր